

Ինստիտուտի գրանցման տարբերակներ. (1) լրացրեք այս ձևաթուղթը կամ (2) հաշվառվեք առցանց հետևյալ կայքում. institute.ids.org:

Ուսանողի տվյալները խնդրում ենք գրել ընթերցելի:

Լրիվ անունը (անուն, հայրանուն, ազգանուն)

Նախընտրելի անունը	Նախընտրելի լեզուն	Եկեղեցու անդամության համարը (եթե առկա է)
Ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի)	Սեռը ☐ Արական ☐ Իգական	Կրոն ☐ ՎՕՍ ☐ Այլ կրոն
Փոստառաքման հասցեն	Քաղաք	Նահանգ կամ մարզ
		Փոստային ինդեքս
		Երկիր
Հեռախոս	☐ Տան ☐ Բջջային	Կարող եմք հաղորդագրություն ուղարկել ձեզ: ☐ Այո ☐ Ոչ
Էլ-փոստի հասցե	Տեքստային հաղորդագրության երկիրը Կապ հաստատելու նախընտրելի տարբերակը ☐ Էլ-փոստ ☐ Հաղորդագրություն ☐ Կապ չհաստատել	
Ներկայիս ծուխը կամ ճյուղը	Ներկայիս ցիցը կամ շրջանը	Դպրոցը (եթե կիրառելի է)

Ինստիտուտի դասի գրանցում

Դասընթացը և բաժինը	Ուսուցիչը	Դասի օր(եր)ը և ժամը
Դասընթացը և բաժինը	Ուսուցիչը	Դասի օր(եր)ը և ժամը
Դասընթացը և բաժինը	Ուսուցիչը	Դասի օր(եր)ը և ժամը

Ուսանողի Ստորագրությունը Գրանցման այս ձևաթուղթը ստորագրելով հաստատում եք ստորև տրված համաձայնագրի 2-եր ընդունումը:

Ուսանողի ստորագրությունը	Ամսաթիվը
--------------------------	----------

Պայմանագիր

Մասնակցել ինստիտուտի ծրագրին

Ինստիտուտի ծրագրին մասնակցելը մեծ արտոնություն է, և մենք բարի գալուստ ենք մաղթում Ձեզ: Դուք համաձայնվում եք ենթարկվել ինստիտուտի քաղաքականությանը և նաև համաձայն եք, որ Սեմինարիաներն ու Կրոնի Ինստիտուտները՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահի Կորպորացիան և դրա հետ փոխկապակցված իրավաբանական անձինք (հավաքականություն «մենք»)՝ պատասխանատվություն չենք կրում որևէ վնասի համար, որը կարող է առաջանալ այս քաղաքականությանը Ձեր չհետևելու պատճառով:

Ուսանողի տվյալների գաղտնիության քաղաքականություն

Դուք համաձայն եք, որ մենք կարող ենք վերցնել Ձեր անձնական տվյալներն այս ձևաթուղթից և Ձեր անդամության գրանցումից (եթե դուք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եք) և ընթացք տալ դրանց՝ ինստիտուտի Ձեր ցուցակագրման և մասնակցության, ինչպես և հարցերին պատասխանելու և խնդիրներ լուծելու նպատակով, որոնք կարող են առաջանալ, երբ դուք մասնակցում եք ինստիտուտի ծրագրին: Դուք հասկանում եք, որ Ձեր անձնական տվյալները կարող են փոխանցվել Միացյալ Նահանգների Եկեղեցու գլխավոր գրասենյակ, և անհրաժեշտության դեպքում, դուք տալիս եք Ձեր համաձայնությունը: Ձեր անձնական տվյալները կարող են պահպանվել անորոշ ժամանակով, որպես Եկեղեցու մշտական պատմական գրանցում: Մենք երբեք չենք վաճառի Ձեր տվյալները: Անձնական տվյալները կորստից, սխալ օգտագործումից և չարտոնված փոփոխումից պաշտպանելու, ինչպես նաև դրանց գաղտնիությունը պահպանելու համար մենք օգտագործում ենք տեխնիկական և կազմակերպչական միջոցներ:

Հետազոտություններ և ուսումնասիրություններ. Եթե Ձեզ խնդրեն մասնակցել հետազոտության կամ ուսումնասիրության, դուք հասկանում եք, որ ձեր մասնակցությունը լիովին կամավոր է և ցանկացած պահի դուք կարող եք

հրաժարվել: Հետազոտական ուսումնասիրության համար տրամադրած որևէ անձնական տեղեկություն (օրինակ՝ էլեկտրոնային փոստի հասցե կամ բջջային հեռախոսահամար) կարող է օգտագործվել միայն Ձեզ հետ կապ հաստատելու նպատակով՝ հետագա ուսումնասիրությունների կամ հարցումների մասնակցելու համար: Դուք կարող եք հրաժարվել Ձեզ հետ կապ հաստատելուց:

Նկարներ օգտագործելու թույլտվություն

Հնարավոր է, որ մենք առիթ ունենանք նկարահանելու կամ ձայնագրելու Ձեզ ինստիտուտի նպատակների համար: Դրանց հավանական օգտագործումը ներառում է, բայց չի սահմանափակում՝ հեռավորության վրա ուսուցման միջոցառումները, ուսուցիչների վերապատրաստումը և նկարների ու տեսանյութերի օգտագործումը տարեգրություններում, հոգևոր հավաքների ծրագրերում, հայտարարությունների տախտակներին, վեբ կայքերում ու սոցիալական ցանցերում: Այդ նպատակով, դուք հանձնարարում և անդառնալիորեն շնորհում եք մեզ իրավունք և թույլտվություն՝ օգտագործելու, – անսահմանափակ ժամկետով, քանակով, լեզվով, աշխարհագրությամբ և/կամ միջավայրում (ներառյալ, այժմ անհայտ և ապագայում հայտնի դարձած մեդիա միջավայրը), – վերարտադրելու, տարածելու, ցուցադրելու, ներկայացնելու, ստեղծելու ածանցյալ ստեղծագործություններ կամ ենթաարտոնագրելու Ձեր մասնակցությամբ ցանկացած պատկեր կամ ձայնագրություն, որն առնչվում է ինստիտուտի հետ: Դուք մեզ լիազորում եք օգտագործել կամ արձանագրել Ձեր անունը, ձայնը, նկարը և կատարումը. հարցազրույց ունենալ և ձայնագրել Ձեր հարցազրույցը. պատճենել, վերարտադրել, փոփոխել, խմբագրել և միագումարել ցանկացած ձայնագրություն մեր հայեցողությամբ օգտագործելու համար: Դուք լիազորում եք պատկերների կամ ձայնագրությունների վերարտադրումը, վաճառքը, հեղինակային իրավունքը, ցուցադրումը, հեռարձակումը, էլեկտրոնային պահպանումը և/կամ բաշխումը մեր հայեցողությամբ՝ առանց սահմանափակման: Սույնով

Դուք ազատում եք մեզ նման օգտագործման և հրապարակման ցանկացած և բոլոր պարտավորություններից և հրաժարվում եք վերոհիշյալին առնչվող ցանկացած փոխհատուցման իրավունքից:

Համացանցով և առցանց օգտագործման պայմաններ

Մենք առաջարկում ենք մի շարք էլեկտրոնային միջոցներ ինստիտուտի դասերին Ձեր մասնակցության համար: Դուք կարող եք որոշել՝ օգտագործել այդ ռեսուրսները, թե՛ ոչ, սակայն, օգտագործելու դեպքում, Դուք ընդունում եք հետևյալ պայմանները:

Երբ դուք մուտք եք գործում համացանց, օգտագործելով մեր հարմարությունները, սարքավորումները կամ ակադեմիկոսները, մենք կարող ենք տեղեկություններ ստանալ Ձեր վեբ ծրագրից: Այդ տեղեկությունները կարող են ներառել՝ Ձեր IP հասցեն, ծրագրի տեսակը, օպերացիոն համակարգը և լեզվի նախապատվությունը, ցանկացած վեբ էջ, որն այցելել էիք նախքան մեր կայքի հղումը, յուրաքանչյուր այցի ամսաթիվը, ժամանակը և տվյալները, որ որոնում եք մեր կայքերում: Համացանցում տվյալներ հավաքելու համար մենք նաև օգտագործում ենք Cookie-ներ և clear GIF-եր: Դուք կարող եք փոխել Ձեր որոնիչի կարգավորումը՝ դադարեցնելու համար cookie-ներ ընդունումը կամ Ձեզ նախապես տեղեկացվի cookie-ներ ընդունելու մասին այցելվող կայքերում: Եթե դուք կազմաձևեք Ձեր որոնիչի կարգավորումներն այնպես, որ չընդունեք cookie-ներ կամ clear GIF-եր, այնուամենայնիվ, դուք չեք կարողանա օգտագործել մեր կայքերի որոշ բաժիններ կամ գործառնություններ:

Կայքերը, ծրագրերը, բովանդակությունը, սերվերները և այլ տեխնոլոգիաներ ու նյութեր, որոնք մենք օգտագործում ենք ինստիտուտի ծրագրերը ներկայացնելու համար («Ինստիտուտի Գործիքներ»), պատկանում են կամ լիցենզավորված են և մշակվում են մեր կողմից: Մենք կարող ենք վերահսկել Ինստիտուտի Գործիքների շրջանակում օգտագործվող կամ տեղի ունեցող բոլոր հաղորդակցությունների (էլ. փոստով, տեքստային, սոցիալական լրատվամիջոցների և այլն), անպատշաճ կամ անօրինական բովանդակությունը, և ըստ անհրաժեշտության, կարող ենք դրանք փոխանցել հոգևոր առաջնորդներին կամ իրավապահ մարմիններին՝ ուսանողների և Եկեղեցու շահերը պաշտպանելու համար: Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը սույն վերահսկողության և վերահասցեագրման վերաբերյալ: Թեև մենք կարող ենք վերահսկել հաղորդակցման ինչ-որ մասը, սակայն չենք կարող վերահսկել բոլոր հաղորդակցությունները: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահով չէ: Մենք չենք կարող երաշխավորել, որ դուք գերծ կմնաք անցանկալի հաղորդագրություններից, նյութերից, վիրուսներից կամ այլ վնասագրից: Անպատշաճ բովանդակություն պարունակող հաղորդագրությունները կարող են առանց ծանուցման ջնջվել և, հնարավոր է, չուղարկվեն նախատեսված հասցեատերերին: Դուք համաձայն եք, որ դուք չեք ուղարկի կամ

վերաուղարկի որևէ հաղորդագրություն, որն անպարկեշտ է, զրպարտիչ, ապօրինի և ատելություն պարունակող կամ ոտնահարում ու խախտում է ուրիշների իրավունքները: Ինստիտուտի Գործիքները կարող են օգտագործվել միայն ավետարանի հետ կապված թեմաներով ու իրադարձություններով մյուս ուսանողների, ուսուցիչների և եկեղեցական առաջնորդների հետ շփվելու համար: Դուք չեք կարող Ինստիտուտի Գործիքներից ներբեռնել, վերաբաշխել կամ հրապարակել (օրինակ, YouTube կամ Facebook կայքերում) որևէ տեքստ, պատկեր, ձայնագրություն կամ տեսագրություն:

Մենք պատասխանատվություն չենք կրում Ձեր օգտագործման, օգտվելու անկարողության, այլ օգտվողների կամ կապակցված կայքերի հետևանքով Ինստիտուտի Գործիքներին, այնտեղ տեղադրված նյութերին և հաղորդագրություններին պատճառած որևէ վնասի համար (ներառյալ կորցրած տվյալները): Ինստիտուտի Գործիքները տրամադրվում են «ինչպես որ է» վիճակում: Մենք հրաժարվում ենք բոլոր բացահայտ կամ ենթադրյալ երաշխիքներից, այդ թվում նաև պահանջատիրոջ, վաճառքների և կոնկրետ նպատակի համար պիտանիության երաշխիքներից: Մենք չենք երաշխավորում, որ Ինստիտուտի Գործիքների աշխատանքը կլինի անխափան կամ սխալներից զերծ, որ թերությունները կշտկվեն, կամ որ որևէ վեբ կայք կամ սերվեր, որտեղ հասանելի է Ինստիտուտի Գործիքները, զերծ է վիրուսներից կամ այլ վնասակար բաղադրիչներից:

Այլ ցուցումներ

Դուք պատասխանատու եք գործելու Ձեր տարածքի բոլոր օրենքների և կանոնակարգերի համաձայն, սակայն այս Համաձայնագիրը ղեկավարվում է ԱՄՆ-ի Յուտա նահանգի օրենքներով, հաշվի չառնելով օրենքների տարաձայնության սկզբունքները: Սույն Համաձայնագրին կամ ինստիտուտին վերաբերող ցանկացած իրավական գործողություն ի կատար ածելու համար, այն պետք է բերվի, ԱՄՆ-ի Յուտա նահանգի Սոլթ Լեյքի վարչական շրջանի պետական կամ դաշնային դատարան և դուք սույնով տալիս եք Ձեր համաձայնությունը ներկայացնել նման դատարանների անհատական իրավասությանը: Եթե սույն Համաձայնագրի որևէ դրույթ անօրինական, անվավեր կամ ուժը կորցրած համարվի, ամբողջությամբ կամ մասնակիորեն, դա չի կարող ազդել մնացած դրույթների վրա, եթե մենք չորոշենք, որ անվավեր կամ ուժը կորցրած դրույթը Համաձայնագրի կարևոր պայման է, որի դեպքում մենք մեր հայեցողությամբ կարող ենք փոփոխել Համաձայնագիրը:

Սույն Համաձայնագրի վերաբերյալ հարցեր կամ մտահոգություններ ունենալու դեպքում խնդրում ենք ուղարկել դրանք հետևյալ հասցեով siregistration@ldschurch.org, կամ կապ հաստատեք ինստիտուտի ձեր տեղական կառավարչի հետ: